Ն Վ Ի Ր Վ Ո Ւ Մ Է

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ)

75-ԱՄՅԱԿԻՆ

Ռ.Զ. ՄԱՐՈՒԽՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՔԱՅԼՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը (Պոլիտեխնիկ) բոլորեց իր հիմնադրման 75 տարին:1933թ. փետրվարի 27-ին Հայկոմկուսի Կենտկոմը և կառավարությունը ընդունեցին որոշում նույն թվականի մարտի 1-ից միավորել Հայաստանի շինարարական և քիմիատեխնոլոգիական ինստիտուտները և դրանց հիմքի վրա ձևավորել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը (ԵրՊԻ)՝ երկու ֆակուլտետով:

Երևանի պոլիտեխնիկականի լինելիության պահից սկսած՝ հաստատության գործունեության հիմնական ուղղություններն էին՝

- բարձրորակ մասնագետների պատրաստման ապահովումը,
- գիտահետազոտական աշխատանքների կատարումը,
- բարձրորակ ուսումնական ձեռնարկների, դասագրքերի և մենագրությունների ստեղծումը,
- պրոֆեսորադասախոսական կադրերի որակավորման բարձրացումը:

Հիմնադրման պահին պոլիտեխնիկականում գործող երկու ֆակուլտետները ունեին ընդամենը 107 ուսանող: Այդ ֆակուլտետները կոչված էին ինժեներական կադրերով ապահովելու բառի բուն իմաստով շինարարական հրապարակի վերածված հանրապետության շինինդուստրիան և բուռն զարգացող քիմիական արդյունաբերությունը:

Նորաստեղծ կրթօջախի գործունեությունը, բնականաբար, սերտորեն պետք է կապվեր խորհրդային երկրում սոցիալիզմի հիմքերի կառուցման, նրա արդյունաբերական ենթակառուցվածքների ստեղծման հետ: Այսինքն՝ Պոլիտեխնիկը դարձավ մեր

երկրի արդյունաբերության մշտական ուղեկիցը, և չպետք է անտեսել նաև այն իրողությունը, որ այդ ոլորտի հաջողությունները միաժամանակ և փոխադարձաբար պայմանավորված էին ԵրՊԻ-ի ընդլայնմամբ ու զարգացմամբ:

Կրթօջախը արագընթաց զարգանում էր, ստեղծվում էին նոր ֆակուլտետներ, ամբիոններ ու մասնագիտություններ: Տնտեսության զարգացմանը զուգընթաց՝ աստիճանաբար ընդլայնվեցին ընդունելության պլանները, զգալիորեն աճեց ուսանողական համակազմը: Միանգամայն օրինաչափորեն Պոլիտեխնիկականը ընդլայնեց իր տարածաշրջանային աշխարհագրությունը: Ստեղծվեցին Պոլիտեխնիկի մասնաճյուղերը՝ 1959թ. Լենինականում (Գյումրիում) և Կիրովականում (Վանաձորում), 1984թ. Գորիսում (որը 2005թ. դարձավ ինքնուրույն հաստատություն), 1985թ. Կապանում:

Ուրույն դերակատարություն ունեցավ հաստատության Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանին կից մասնաճյուղը, որը ստեղծվեց 1960թ. հուլիսին՝ երեկոյան ուսուցման մասնաճյուղի կարգավիճակով, 4 մասնագիտությունների գծով: Մասնաճյուղը մոտ 14 տարի պատվով կատարեց իր առաքելությունը: Արտաերևանյան ստորաբաժանումների շարքում չպետք է անտեսել 1972թ. Ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետի հիմքի վրա Դիլիջան քաղաքում բացված և մինչև 90-ականների սկիզբը գործած բաժանմունքը, որի բուռն գործունեության տարիներին այստեղ ուսանում էին հարյուրավոր երիտասարդներ Դիլիջանից և մերձակա շրջաններից: 1988թ. համաժողովրդական զարթոնքի օրերին Պոլիտեխնիկը Լեռնային Ղարաբաղում հիմնեց իր բաժանմունքը, ապա մասնաճյուղը, որը հետագայում տեղի մանկավարժականի հետ համատեղ դարձավ Արցախի պետական համալսարանի կազմավորման հիմքը: 1985թ. պոլիտեխնիկականի ուսանողական համակազմի թվաքանակը գերազանցեց 25 հազարը, որը կազմում էր հանրապետության բուհական ուսանողության շուրջ 40%-ը: Այդ տարիներին ինստիտուտում ուսանում էին ավելի քան 20 երկրների թվով 450 ուսանողներ:

Հզորանալով և ձեռք բերելով միութենական և միջազգային լայն ճանաչում, Պոլիտեխնիկը հսկայական ներգործություն ունեցավ Հայաստանի արդյունաբերական և գիտատեխնիկական առաջընթացի վրա, երկրին տվեց ինժեներների, գիտնականների, արտադրության ղեկավարների մի քանի սերունդ:

Այսօր նաև պատեհ պահն է մեր հարգանքի տուրքը մատուցելու Պոլիտեխնիկի առաջին սերնդի այն լեգենդար դասախոսներին ու գիտնականներին, ովքեր կերտեցին մեր բուհի առանձնակի ու ուրույն նկարագիրը, նրա մնայուն ավանդույթներն ու արժեքները և փոխանցեցին դրանք սերնդեսերունդ:

Նրանք են՝ Ալեքսանդր Թամանյան, Աշոտ Տեր-Մկրտչյան, Ստեփան Ղամբարյան, Ալեքսանդր Հակոբյան, Վրույր Թորգոմյան, Լևոն Ռոտինյան, Արտակ Տոնյան, Հովհաննես Նավակատիկյան, Հարություն Զաքյան, Նիկողայոս Բունիաթյան, Նազուշ Հարությունյան, Թորգոմ Խաչատրյան, Օգսեն Սապոնջյան, Գուրգեն Արարքցյան, Միքայել Վարունցյան, Սերգեյ Համբարձումյան, Վարազդատ Հարությունյան, Լիպարիտ Ղուլոյան. անուններ, որոնք թողել են անմոռանալի հետք սերունդների հիշողության մեջ և ընդմիշտ կմնան մեր բուհի և հայրենական ինժեներական կրթության ու գիտության պատմության մեջ:

Բուռն զարգացման ու վերելքից հետո իր պատմության խորհրդային շրջանը Պոլիտեխնիկն ավարտեց մեր ժողովրդին բաժին հասած փորձություններով ու մարտահրավերներով առլեցուն ժամանակաշրջանում: Արցախյան պատերազմը, ավերիչ երկրաշարժը, շրջափակումը, արդյունաբերական հզոր համալիրի կազմալու-

ծումը, բնականաբար, բացասաբար անդրադարձան նաև Պոլիտեխնիկական կառույցի գործունեության վրա:

Այդ շրջանում սովորական դարձած ցույցերը, դասադուլները, կոլեկտիվի բողոքի ժողովներն անխոս և՛ առաջ էին բերում ուսումնական բնականոն գործընթացի խաթարում, և՛ հետևաբար, ազդում ուսուցման որակի վրա:

Կրթօջախի հարյուրավոր ուսանողներ ոգու կանչով կամավոր մասնակիցը դարձան արցախյան ազատամարտի: Նրանցից շուրջ չորս տասնյակը զոհվեցին այդ գոյամարտում: Պատերազմի ընթացքում հին ու նոր սերնդի շատ պոլիտեխնիկցիներ զինվորագրվեցին հայկական նորաստեղծ բանակին և իրենց բոլոր կարելիությունները ի սպաս դրեցին մեր երկրի պաշտպանության սուրբ գործին: Երախտագետ բուհը Մեծ Հայրենականում զոհված պոլիտեխնիկցիների հուշակոթողի կողքին արծվակիր խաչ-քար-հուշարձանով հավերժացրեց արցախյան ազատամարտում զոհված իր հերոս ուսանողների ու շրջանավարտների հիշատակը: Նրանք պոլիտեխնիկական փառքի տարեգրության էջերում են, մեզ հետ և մեր հուշերում:

1990թ. մեր հաստատությունը թևակոխեց իր պատմության հետխորհրդային շրջանը, որի առաջին իսկ ամիսներին բացահայտվեց մեր կրթական կառույցների՝ ձևավորվող նոր տնտեսական կացութաձևին անպատրաստ լինելու իրողությունը: Հատկապես ճարտարագիտական կրթության բնագավառում անզեն աչքով իսկ տեսանելի էր դառնում նոր կրթական մոդելի՝ աշխատաշուկայի կարիքների հարաճուն փոփոխությանն արագորեն արձագանքող համակարգի ձևավորման անհրաժեշտությունը: Կարելի է արձանագրել, որ Հայաստանի անկախացումը և պոլիտեխնիկականի արմատական բարեփոխումների իրականացման սկիզբը ժամանակային առումով միմյանց համընկան: Այս փուլում իր առանձնահատուկ դերակատարությունը և ծանրակշիռ ներդրումը ունեցավ 1988թ. ռեկտոր ընտրված տ.գ.դ., պրոֆեսոր, այդ ժամանակ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Յուրի Սարգսյանը, որին վիճակված էր իր ուսերին տանել բարձրագույն տեխնիկական կրթության համակարգի կառուցվածքա-ծրագրային բարելավման պատասխանատու ու դժվարին առաքելությունը, դառնալ հանրապետությունում ճարտարագիտական կրթության արմատական բարեփոխումների նախաձեռնողն ու գաղափարախոսը:

Ժամանակի ու կյանքի հրամայականով 1991թ. նոյեմբերի 29-ին ՀՀ առաջին նախագահի թիվ ՆՀ-4 հրամանագրով հանձնարարվեց ՀՀ կառավարությանը Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը վերակազմավորել Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի: ԵրՊԻ-ի անցումը համալսարանական կարգավիճակի ինքնանպատակ չէր և ոչ էլ տուրք արևմտյան կրթական մոդելներին: Հավասարապես կարևորելով ինչպես խորհրդային, այնպես էլ ազգային և համաշխարհային կրթական լավագույն փորձը, ընտրվել էր դրանց ներդաշնակ զուգորդման ու փոխլրացման ուղին: Հայաստանի կրթական համակարգի պատմության մեջ առաջին անգամ ՀՊՃՀ-ում սկիզբ դրվեց ուսուցման բազմաստիճան (եռաստիճան) կառուցվածքին: Ուսուցման առաջին երկու աստիճաններում՝ բակալավրատ և մագիստրատուրա, հաջորդաբար իրականացվում էին բարձրագույն կրթության ծրագրեր, իսկ երրորդ աստիճանում՝ հետազոտողի հետբուհական ծրագիրը: Սույն մոդելը աստիճանաբար ներդրվեց նաև ՀՀ այլ ուսումնական հաստատություններում, իսկ 1999թ. ստացավ համապատասխան օրենսդրական ամրագրում:

Կարևորում եմ ևս մեկ իրողություն. համալսարանը արմատապես փոխեց իր մասնագիտությունների անվանացանկը՝ հնարավորինս դրանք խոշորացնելով, ընդլայնելով և դարձնելով համահունչ առկա պահանջարկին: Զուգահեռ ընթացան նաև կազմակերպական ու կառուցվածքային այլ լայնամասշտաբ փոփոխություններ: Արվածի արդյունքն ու արժեքն առավել գնահատելի են դառնում, երբ հետադարձ հայացքով անդրադարձ ենք կատարում այդ բարեփոխումների կատարման ժամանակահատվածում երկրում ստեղծված իրավիճակին. չհայտարարված պատերազմ, խորը շրջափակում, էներգետիկական համակարգի փաստացի կազմալուծում, կադրային աննախադեպ արտահոսք, գործազրկություն, դիմորդների արագընթաց նվազող հոսք:

Սակայն պոլիտեխնիկցիներն իրենց բնորոշ պատվախնդրությամբ ու արժանապատվությամբ անցան այս դժվարին փորձությունները ևս, համախմբեցին բոլոր հնարավոր ներքին ռեսուրսները և 1995թ., ըստ էության, ավարտեցին համալսարանի վերակազմակերպման շրջանը:

1990-ական թթ. կեսերից հանրապետությունում արձանագրվեցին առաջին, թեպետ շատ փոքր, տեղաշարժերը սոցիալ-տնտեսական ոլորտում, բնականաբար, առաջ բերելով նաև որոշակի աշխուժացում կրթական համակարգում: Այս առումով կարելի է 1996թ.-ից հետո ընկած ժամանակահատվածը որակել որպես շարունակական վերելքի ու զարգացման փուլ, և բոլորովին էլ պատահական չէր, որ մշակվեց ու գործողության մեջ դրվեց համալսարանի առաջին ռազմավարական պլանը 1996-2000թթ. համար՝ «ՀՊՃՀ-ն 21 դարի նախաշեմին» հավակնոտ անվանումով:

Հավատարիմ մնալով պոլիտեխնիկական լավագույն ավանդույթներին, գնահատելով նախորդ հնգամյակում իրականացված բարեփոխումների արդյունավետությունը և քննախույզ վերլուծելով միջավայրային փոփոխությունները, մշակվեցին 7 հիմնական ռազմավարական նպատակները, ուրվագծվեցին դրանց իրագործման ուղիներն ու մեթոդները: Միանշանակ է, որ 1996-2000թթ. ռազմավարական պլանն ունեցավ էական ազդեցություն համալսարանի գործունեության բոլոր բնագավառների վրա և լինելով առաջինը ՀՀ բուհական համակարգում, արժանացավ Եվրախորհրդի փորձագետների բարձր գնահատականներին: Միևնույն ժամանակ պետք է ազնվորեն խոստովանել, որ այն զերծ չէր որոշակի, հատկապես կազմակերպչական բնույթի թերություններից, և պլանի իրականացումը նաև բացահայտեց որոշ կանխատեսումների ոչ իրատեսական լինելու հանգամանքը:

Վերը նշվածը հաշվի առնվեց հաջորդ՝ «ՀՊՃՀ -ն 21-րդ դարում» նորացված ռազմավարական պլանում, որում ուրվագծվածը առավել հեռահար նպատակներ էր հետապնդում: Այսօր գործողության մեջ է համալսարանի երրորդ՝ 2006-2010 թթ. ռազմավարական պլանը, որի մշակմանը նախորդող փուլը, ըստ էության, ներառել է համալսարանի գործունեության արդյունավետության մանրակրկիտ, ավելի քան 130 ցուցանիշների միջոցով ուսումնասիրությունը, արտաքին և ներքին միջավայրային գործոնների և արդյունավետության ցուցանիշների փոխազդեցության բացահայտումն ու գնահատումը: Զգալիորեն փոփոխվել են նպատակային հիմնախնդիրները, առանձնահատուկ ընդգծվում են ներուժի համալրման ու երիտասարդացման, ինֆրակառուցվածքի բարելավման և համալսարանի համակողմանի ինֆորմատացման առաջնայնությունները: Այսօր վստահորեն կարելի է արձանագրել, որ երկրորդ և գործող երրորդ ռազմավարական պլաններում առաջադրված նպատակային ուրվագծումների գերակշիռ մասի իրագործման արդյունքում ՀՊՃՀ-ի վարկանիշը մնում է կայուն և

բավականաչափ բարձր: Օրեցօր զարգացող ու երբեմն նաև հանիրավի ընդլայնվող մրցակցային դաշտում մեր հաստատության դիրքերը բավականաչափ ամուր են: Մասնագիտությունների խոշորացումը և թարմացումը, ծրագրային փաթեթների շարունակական նորացումը, ուսումնական գործընթացի կազմակերպչական նոր գործառույթների ներդրման ու հաջողությամբ իրագործման առաջանցիկ քայլերը համալսարանի՝ դեպի ապագան հաստատուն քայլքի վկայություններն են: 2008թ. սեպտեմբերի 1-ի տվյալներով ՀՊՃՀ-ի ուսանողական համակազմը մոտեցավ 11000-ին, ընդ որում, Երևանի կրթահամալիրում այն շուրջ 8000 է: Աննախադեպ էր բակալավրի կրթական ծրագրով այս տարվա ընդունելության արդյունքը, որը վերջին 5 տարիների կտրվածքով լավագույնն էր՝ 2159: Բացառիկ էր, թեպետ որոշակի գործոնների վերադրման հետևանքով, նաև մագիստրոսական ծրագրով ընդունելությունը՝ շուրջ 600: Այս տարի բուհը տվեց շուրջ 3000 շրջանավարտ: Բնականաբար, նման մեծաթիվ ուսանողական համակազմի համար ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և իրականացումը համալսարանի անձնակազմից պահանջում է ուժերի գերագույն լարում և բոլոր ռեսուրսների համախմբում:

Համալսարանը հաջողությամբ է իրականացնում իր առաքելությունը՝ գործատու և գործընկեր կազմակերպությունների մի ամբողջ խմբի հետ փոխհամաձայնեցված գործողությունների շնորհիվ: Այսօր պահն է այդ խմբից առանձնացնել մի քանիսին: Գործատու կազմակերպության հետ համագործակցության յուրօրինակ ու հաջողված մոդել պետք է համարել տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից ճյուղերից մեկի առաջատարի՝ «Սինոփսիս»-ի հետ մեր համագործակցության տարբերակը: Սա իրապես բուհ-արտադրություն հաջողված փոխշահավետ կապի փայլուն և արդեն ընդօրինակվող տարբերակ է, որն այսօր զարգացումների նոր փուլ է մտնում ուսումնառության լիարժեք քառամյա ծրագրի ներդրման ճանապարհով, բնականաբար, ենթադրելով ուսումնական պլանների ու առարկայական դասընթացների բովանդակային լուրջ վերաճշգրտումներ: Հաջող համագործակցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում իր արտահայտությունն է ստացել նաև մի շարք այլ գործընկեր կազմակերպությունների հետ իրագործվող ծրագրերում, մասնավորապես, «Լայքոս Արմենիա», «Սորսիո», «Վիրաժ-Լոջիք», «Սան Մայքրո սիսթեմս», «Յունիքոմփ», «Մայքրոսոֆթ Ար Էյ», Տեղեկատվական տեխնոլոգիաների միություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ: Արդյունավետ է համագործակցությունը Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատի հետ, որը, ըստ էության, ամբողջությամբ իր վրա է վերցրել մեր հաստատության կապանյան մասնաճյուղի՝ ժամանակի պահանջներին հարիր ինֆրակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրը, ամենայն աջակցություն է ցուցաբերում պրակտիկաների և մի շարք դասընթացների՝ անմիջականորեն արտադրական օբյեկտում կազմակերպմանը, իսկ վճարովի ուսանողական համակազմին ցուցաբերում է շոշափելի նյութական օգնություն: Բնականաբար, այս համագործակցությունը իր արտահայտություն է ստացել նաև Երևանի կրթահամալիրի ընդերքաբանության և մետալուրգիայի դեպարտամենտի կտրվածքով:

Ավանդաբար հաջողված և արդյունավետ են համալսարանի և ՀՀ էներգետիկ օբյեկտների համագործակցական ծրագրերը էլեկտրակայանների, էլեկտրական ցանցերի, ինչպես նաև համակարգի կառավարման կառույցների հետ: Այստեղ առանձնանում է Հայկական ԱԷԿ-ի հետ երկար տարիների փորձարկում անցած և այսօր բովանդակային նոր, որակական դրսևորումներ արձանագրող համագործակցությունը

ուսումնական և գիտամեթոդական բնագավառներում: Ատոմային էներգետիկայի բնագավառի փորձառու մասնագետներն անմիջական մասնակցություն են ունենում ուսումնական գործընթացի կազմակերպմանը, վարում հատուկ դասընթացներ, ղեկավարում ավարտական աշխատանքներ և այլն: Նկատելի է տեղաշարժ նաև քիմիատեխնոլոգիական մասնագիտությունների գծով, մասնավորապես իր առաջին պտուղներն է տալիս «Նաիրիտ»-ի հետ ավանդական կապերի վերականգնմանը նպատակաուղղված փոխշահագրգիռ գործառույթների իրականացումը, որի արդյունքում արտադրական օբյեկտում կստեղծվի համալսարանի համապատասխան դեպարտամենտի մասնաճյուղային կառույց: Համագործակցության ընդլայնմանն են միտված նաև պայմանագրային հարաբերությունների հաստատումը «Մաքուր երկաթ□ գործարան ՓԲԸ-ի, «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» ՍՊԸ, «Ռուսալ-Արմենալ», «Վալեքս գրուպ» ՓԲԸ-ի և այլ կազմակերպությունների հետ:

Այսօր համալսարանի առաջնահերթ խնդիրներից է բարձրացնել ուսուցման որակն ու արդյունավետությունը կրթական բոլոր ծրագրերի գծով՝ Բոլոնյան գործընթացի խնդիրներին համահունչ, և այս առումով պետք է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները՝

- ավարտվել է ՀՊՃՀ ուսուցման որակի գնահատման ու ապահովման ներբուհական համակարգի և կազմակերպական սխեմայի մշակումը՝ համապատասխան կառուցվածքային միավորների և նրանց պարտականությունների ու գործառույթների հստակ տարանջատմամբ,
- սկսվել և 3 մասնաճյուղերում լրիվ, իսկ Երևանի կրթահամալիրում մասամբ ավատվել է Համալսարանի կրթական ծրագրերն իրականացնող հիմնական ուսումնական ստորաբաժանումների գործունեության ինքնավերլուծության և որակի գնահատման ներհամալսարանական փուլային գործընթացը,
- ավարտվել են «Մասնագիտության թղթապանակի» ձևավորման աշխատանքները Ստոկհոլմի թագավորական տեխնոլոգիական և Թուրինի պոլիտեխնիկական համալսարանների հետ համատեղ իրականացվող «Ճարտարագիտական կրթության որակի ապահովման համապատասխանեցումը Բոլոնիայի պահանջներին» նախագծի շրջանակներում,
- հաջողությամբ ընթանում է կրեդիտային համակարգի ներդրման գործընթացը բակալավրի կրթական ծրագրի գծով. այդ նպատակով մշակվել, հրատարակվել և ուսանողներին են բաժանվել կրեդիտային ուսումնառության դեպարտամենտային հատուկ ուղեցույց-տեղեկագրքեր՝ բոլոր մոդուլ-դասընթացների ստանդարտ համառոտագրերով և կրեդիտային համակարգի չափորոշիչ նյութերի համապատասխան փաթեթով,
- շարունակվում են գործընթացները ուսումնական ինֆրակառուցվածքի հետագա բարելավման ու արդիականացման, որակյալ դասավանդման մեթոդական, տեխնոլոգիական ռեսուրսների, այդ թվում՝ տեխնոլոգիական կարողությամբ լսարանների ցանցի զարգացման ուղղությամբ, արդեն կահավորվել և շահագործվում են ավելի քան 14 այդպիսի լսարաններ:

Վերը նշվածը չէր ունենա պատշաճ արդյունք և արդյունավետություն, եթե չլիներ համապատասխան և բարձր մասնագիտական կարողություններով օժտված պրոֆեսորադասախոսական կազմ: Այս առումով համալսարանը կարողացել է նվազագույնի հասցնել 1990-ականների սկզբի արտահոսքի հետևանքները և սկսել է կադրային

ներուժի թարմացման ու երիտասարդացման աստիճանական գործընթացը: Համալսարանում այսօր աշխատում են գիտությունների 68 դոկտորներ, 455 թեկնածուներ, ՀՀ ԳԱԱ 5 անդամներ: Համալսարանում գործող մասնագիտական 6 խորհուրդներում յուրաքանչյուր տարի պաշտպանվում են ավելի քան 30 թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Համալսարանը շարունակում է պատվով կատարել նաև մեկ այլ առաքելություն՝ այն եղել ու մնում է տեխնիկական գիտությունների զարգացման առաջատար կենտրոնը Հայաստանի Հանրապետությունում:

Համալսարանում հաջողությամբ իրականացվում են 45 թեմատիկ, 11 բազային և 2 պետական նպատակային հետազոտական ծրագրեր, իսկ Միջազգային տարբեր հիմնադրամներից ֆինանսավորվող գիտական նախագծերի թվաքանակը կազմում է 11:

Պոլիտեխնիկը հաջողությամբ զարգացնում և բազմազանեցնում է համագործակցությունը արտերկրի բազմաթիվ հայտնի և բարձր վարկանիշ ունեցող կրթական հաստատությունների հետ: Միայն վերջին երկու տարում կնքվել են երկկողմ համագործակցության 21 պայմանագրեր, հաջողությամբ կազմակերպվել ու իրականացվել են կրթական բարեփոխումների հիմնահարցերին նվիրված միջազգային խորհրդաժողովներ:

Այսօր համալսարանի ակտիվ գործընկերների շարքում են՝ Աթենքի տեխնիկական համալսարանը (Հունաստան), Հելլբուրնի, Զիգենի, Իլմենաուիի, Շտուտգարդի, Ռոստոկի և Ջենայի համալսարանները (Գերմանիա), Ստոկհոլմի թագավորական տեխնիկական և Լունդի համալսարանները (Շվեդիա), Զլինի Թոմաս Բատայի համալսարանը (Չեխիա), Ճենովայի համալսարանը և Թուրինի պոլիտեխնիկական ինստիտուտը (Իտալիա), Լեհաստանի փաթեթավորման և զարգացման կենտրոնը, Ռեննի կիրառական գիտությունների ազգային համալսարանը, Գրենոբլի համալսարանը (Ֆրանսիա), Սիբիուի համալսարանը (Ռումինիա), Մալթայի համալսարանը, Միդլսեքսի համալսարանը (Անգլիա), Կալիֆոռնիայի պետական համալսարանը, Նորթրիջ, Կալիֆոռնիայի պոլիտեխնիկական համալսարանը, Հ.Սամուելի անվան ճարտարագիտության և կիրառական գիտությունների դպրոցը (ԱՄՆ), Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ մի շարք համալսարաններ:

Այսօր արդեն իսկ կարելի է արձանագրել նաև «Պոլիտեխնիկ» հիմնադրամի հաջող մեկնարկը:

Համառոտակի անդրադառնելով Համալսարանի ապագային և առաջնորդվելով մեր երրորդ ռազմավարական պլանի ուրվագծումներով, կարելի է վստահորեն փաստել, որ համալսարանն ընթանում է կայուն զարգացման ուղիով՝ համահունչ տեղի ունեցող միջավայրային փոփոխություններին ու երևան եկող նոր մարտահրավերներին, և այս առումով բուհի զարգացման ռազմավարական նշանակետերը կամ թիրախները մոտակա հեռանկարում պետք է փնտրել հետևյալում.

1. Մասնագիտական կադրերի և գիտական ներուժի պատրաստման բազմամակարդակ համակարգի զարգացումը նոր կրթական ծրագրերի ձևերի, մեթոդների ներդրման և լաբորատոր ու փորձարարական բազայի արդիականացման հիմքի վրա:
2. Ինովացիոն-կրթական ծրագրերին աջակցող կազմակերպական-մեթոդական համակարգի ստեղծումը:
3. Ռեսուրսների կենտրոնացումը գերակա կրթա-հետազոտական ծրագրերի ուղղությամբ:

4. Համալսարանի մանկավարժական և գիտական ներուժի զարգացումը հիմնարար և կիրառական հետազոտությունների խորացման հաշվին:
5. Համալսարանի եկամուտների աճի ապահովումը կրթական և ինովացիոն գործունեության շրջանակների ընդլայնման ճանապարհով, այդ թվում՝ կադրերի նպատակային պատրաստում, տեխնոլոգիաների տրանսֆերտ, խորհրդատվական ծառայությունների մատուցում, հեռահար ուսուցում և այլն:
6. Ռազմավարական գործընկերների հետ երկարաժամկետ կապերի խորացում, փոխօգնության ձևերի և մեթոդների զարգացում:
7. Բուհի կառավարման համակարգի կատարելագործում:

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը ունի իր առանձնակի տեղն ու դերակատարությունը մեր պետության և հասարակության կյանքում: Պոլիտեխնիկցին միշտ էլ աչքի է ընկել ոչ միայն իր բարձր մասնագիտական պատրաստականությամբ, այլև հայրենասիրությամբ, լայն մտահորիզոնով, պատասխանատու որոշումներ ընդունելու յուրօրինակ ձիրքով և արագ կողմնորոշվելու ունակությամբ: Պոլիտեխնիկականի ծնունդ պետական-քաղաքական գործիչների մի ամբողջ փաղանգ է նվիրվածությամբ, պատվով ծառայել ու շարունակում է ծառայել մեր ժողովրդին ու մեր պետությանը:

Հայոց անկախ պետականության կերտման ներկա ոչ դյուրին փուլում ևս պոլիտեխնիկցիներն ունեն ծանրակշիռ ասելիք ու անելիք, որը, ինչպես միշտ, մեզանից պահանջում և պահանջելու են ամենայն բծախնդրությամբ, քանզի մենք ներկայացնում ենք ունակ, կարող ու հզոր ուժ: